


Փաստ. անվանումը	Ուսանողի Ուսման վարձի գեղջման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-24-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	ԵՄՀ Գիտական խորհուրդ
Պաշտոն	Նախագահ/Սուրեն Օհանյան
Ստորագրություն, կնիք	



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Կարգը փոխվել է մասնակիորեն	Նախագահ/Սուրեն Օհանյան



1. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողի ուսման վարձի զեղչման կարգը սահմանվում է Եվրասիա միջազգային համալսարանի կանոնադրությամբ և սույն կարգով:

2. Ուսանողական զեղչը՝ Եվրասիա միջազգային համալսարանի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից լրիվ կամ մասնակի ուսանողի ուսման վճարի փոխհատուցումն է:

3. Ըստ Եվրասիա միջազգային համալսարանի մասնագիտությունների՝ Համալսարանի կողմից հատկացված ուսման վճարի փոխհատուցման ուսանողական զեղչերի քանակն անփոփոխ է:

4. Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով, Համալսարանի

կողմից տրամադրվում է՝

4.1. առաջին կարգի հաշմանդամ ուսանողներին,

4.2. ընդունելության երկու քննություններից 38 և ավելի միավոր ունեցող դիմորդներին /20 միավորանոց գնահատման համակարգով/ :

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով նշված անձանց նպաստները՝ ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, փաստաթղթերի առկայության դեպքում, ձևակերպվում և տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

6. Եվրասիա միջազգային համալսարանը, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ ուսման վճարն ուսանողական նպաստի ձևով զեղչում է հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց՝ սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.

6.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) և երեք ու ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքից, և երկկողմ ծնողազուրկ ուսանողները զեղչվում են ուսման վարձի 20 տոկոսի չափով,

6.2. միակողմ ծնողազուրկ ուսանողները՝ 15 տոկոս,

6.3. վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներ՝ 15 տոկոս,

6.4. ԼՂ պատերազմի մասնակցի երեխաները 10 տոկոս, և զոհված ազատամարտիկի երեխաները՝ 20 տոկոս,

6.8. բանակից զորացրված ուսանողները՝ 10 տոկոս,

6.9. մինչև երկու տարեկան երեխա ունեցող ուսանողները՝ 20 տոկոս:

7. Սույն կարգի համաձայն ուսանողական բոլոր տեսակի զեղչերից օգտվելու համար դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմումների քննարկումը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից: Դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո քննական կամ ստուգարքային պարտքեր ունեցող ուսանողների դիմումները ենթակա չեն քննարկման:

8. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի համար վերականգնվելիս պահպանվում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում: